ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1888—89 ԱՄԻ.

ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ՀԱՐՔ

ԵՒ ՄԵԾԱՐԳՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Հայաստանեայցս անդրանիկ քրիստոնէական Ս. Եկեղեցին մի մեծ դպրոց է եղել և է ամբողջ հայութեան համար։ Այդ մեծ դպրոցի ղեկավարութեան գլուխ անցած Մայր Աթոռս միշտ ունեցել է իւր մայր—դպրոցը, որի տեղը բռնում է այսօր մեր Հոգևոր Ճեմարանը. ուր՝ այս նուիրական յարկի տակ ժողովուել ենք մենք այժմ տօնելու նորա հնգետասանամեայ տարեդարձը և մի ակնարկ ձգելու անցեալ 1888—89 ուս. տարուայ մեր գործունէութեան վերայ։

Նայելով որ 15 տարին մի դպրոցի կաղ մակերպութեան համար շատ կարճ ժամանակամիջոց է և այն մի մեծ և բարձրագոյն հոգևոր Ճեմարանի համար, որպիսին է մերը, մանաւանդ մեր անպատրաստ և անկազմ Հայոց ազգի մէջ—սակայն նորա հիմնարկութեան օրից ցայսօր անդադար այս է լսածներս, թէ Մայր Աթոռոյ Ճեմարանից մեծ ակնկալութիւններ ունի Հայոց բազմակարօտ ազգը։

Այս սպասելիքը մեծ պատիւ է Ճեմարանիս համար և թէ՛ որ չափով համապատասխան ենք գտնուել մենք այդ ակնկալութիւններին, մասամբ կպարզուի մեր այս տեղեկագրից։

Անցեալ տարի ամբիոնից այսօրս մենք հանդիսաւոր կերպով աւետեցինք նոյն տարուայ ընթացաւարտներից չորսի կուսակրօնութեան ուխտը և ահա այսօր ցնծութեամբ աւետում ենք, որ բարեհաճ հրամանաւ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի այդ չորսից մինը՝ Կարապետ Տ. Մկրտչեանը յունիսի 17ին սարկաւագ ձեռնադրուեցաւ, ունենալով իւր հետ երկու ընկերակիցներ՝ այս տարուայ ընթացաւարտներից Գէորգ

Զէօրէ.քչեանին և Գ. լսարան նոր փոխադրուողներից Գարեգին Յովսէփեանին։

Սորանով մենք հասանք մեր վաղեմի ցանկութեանց սկզբնաւորութեանը՝ ունենալու ճեմարաններից կուսակրօն հոգևորականներ։

Անդրանկութեան պատիւը ստացան շնորհունակ Կարապետ, Գէորգ և Գարեգին սարկաւագները և արժանացան Նորին Վեհափառութեան Սրբազնակատար Հայրապետի սրտաբուղխ օրհնութեանց և բարեհաճ ընդունելութեանը՝ ի շարս միաբանից Մայր Աթոռոյս։

Բարձրագոյն Հոգևոր Իշխանութիւնից հաստատուած և բոլոր դպրոցաց ի հրահանգութիւն տուած ծրագրով երկդասեան դպրոցում աւարտողները պէտք է կարողանան մտնել ճեմարանիս երրորդ դասարանը. բայց այս վերջին տարիների ընդունելութեանց քննութիւնները ցոյց են տալիս, որ ծրագիրը չի կատարվում՝ եկած տղայքը անպատրաստ են. ուստի և մենք ստիպուած ենք լինում վերադարձնել նոցա և բաւականանալ շատ քիչ աշակերտներով երրորդ դասարանում, որ միանգամայն ցանկալի չի կարող լինիլ մեզ համար։ Մեր դպրոցների վարչութիւնների ուշադրութիւնը այս տարի ևս պարտք ենք համարում դարձնելու այս անմիխիթար երևոյթի վերայ, յուսալով թէ նոքա գտնեայ այսուհետև հոգ կոտանեն այս կարևոր խնդրի մասին։

ճեմարանս ըստ առաջնոյն բաղկացած էր անցեալ ուս. տարուայ ընթացքում չորս դպրոցական դասարաններից և երեք մասնագիտական լսարաններից, որոնց մէջ աշակերտեալները զետեղուած էին հետևեալ թուով.

					հոգի
Գ. դասարանում		17 հոգի	Ա. լսարանում	13	»
Դ.	»	27 »	Բ. »	10	»
Ե.	»	19 »	Գ. »	7	»
Զ.	»	17 »	Ընդամենը	110	»

Ցուցակ աշակերտելոց ըստ տեղագրութեան.

I. ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Ա. ԲԵՍՍԱՐԱԲԻԱՅԻ ՎԻՃԱԿ.

Քիշնեւ	1
Նոր Նախիջեւան	4
Թոփթի գիւղ	1
Մեծ Սալայ »	1
Չլտըր »	1
Օրբազար	1
Օդեսսա	1
	10

Բ. ԱԺԴԱՐԽԱՆԻ ՎԻՃԱԿ.

Եկատարինոդար	1
Վլադիկավկազ	1
Ս. Խաչ	1
Ն. Արմաւիր գիւղ	1
	4

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿ.

Տփխիս	2
Վարդաբլուր գիւղ	1
Գեառգեառ »	1
Արտուի »	1
Ջալալօղլի »	1
Դուռնուկ »	1
Դիլիջան »	1
Կողբ »	1
Դուշէթ	1
Ախալցխա	8
Գանձակ	2
Բանանց գիւղ	1
	21

Դ. ԱՐՑԱԽՈՒ ՎԻՃԱԿ.

Շուշի	2
Նորշէն գիւղ	1
Մարաղա »	2
Վարդաշէն »	3
Հաւարիկ »	1
	9

Ե. ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿ.

Երեւան	3
Ղամարլու գիւղ	1
Երտափին »	1
Քալար »	1
Ալեքսանդրապօլ	9
Հ. Նախիջեւան	1
Նորս գիւղ	1
Ագուլիս »	4
Մեղրի »	1
Ցղնա »	1
Բռնակոթ »	2
Գորիս »	1
Խլաթաղ »	1
Վաղարշապատ »	6
Օշական »	1
Աշտարակ »	1
Մարգարա »	1
Իգդիր »	1
Ագիաման »	2
Նորաշէն »	1
Բաղարջուղ »	1

Ղազանֆար	1
Կարս	8
	50

II. ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Ա. ՏԱՃԿԱ—ՀԱՅԱՍՏԱՆ.

Վան	1
Երզնկա	2
Սղերդ	1
Աւրան գիւղ	1
	5

Բ. ԱՆԱՏՈԼԻԱ.

Աֆիոն-Գարահիսար	1
Քեօթայ	1
Ամասիա	1
Սեբաստիա	1
	4

Գ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Կ. Պօլիս	3
	3

III. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Թաւրէժ	3
	3

IV ՌՈՒՄԱՆԻԱ.

Ֆոքշան	1
	1
Ընդամենը	110

Ցաւելով պէտք է յայտնենք որ անցեալ տարի ճեմարանը զրկուեցաւ Գեր. Տ. Մաղաքիա Ս. Եպիսկոպոսից, որի միամեայ հմտալից և ոգևորիչ դասատուութիւնը այնքան արդիւնաւոր եղաւ մեր երեք լսարանաց ուսանողների համար, որ ճեմարանիս հիմնական գիտութիւնները մեծ յաջողութեամբ ճանապարհի վերայ դրուած կլինէին, եթէ հարկը չստիպէր Գեր. Տ. Մաղաքիա Ս. Եպիսկոպոսին հեռանալու Ս. Էջմիածնից։

Նմանապէս զգալի եղաւ ճեմարանիս համար պ. Փիլիպպոս Վարդանեանի հեռանալը, որ մի քանի տարի եռանդուն և բազմափորձ դասատուութեամբ շատ նպաստեց մեր աշակերտեալների դաստիարակութեանը և զարգացմանը։

Որքան ծանր էր Ճեմարանի համար Գեր. Տ. Մաղաքիա Սրբազանի և պ. Փիլիպոս Վարդանեանի հեռանալը Ս. Էջմիածնից, այնուամենայնիւ մենք մխիթարուած ենք, որ նոքա երկուսն էլ գործում են այսօր Հայոց մանկավարժական ասպարիզում։ Մենք ունեցանք և մի այնպիսի կորուստ, որ միանգամայն անդառնալի և անփոխարինելի է. Փետրվարի 19ին կնքեց իւր մահկանացուն մօտ եռամսեայ ծանր հիւանդութիւնից յետոյ մեր սիրելի ընկեր Ստեփանոս Պալասանեանը։ Նոյեմբերի 29ին նա իւր վերջին դասը տուեց և մտաւ անկողին, որից այլ ևս չվերկացաւ։ Նորա երեսնամեայ մանկավարժական և գրականական ասպարիզում անխոնջ և եռանդուն գործունէութեան վարձը եղաւ ընդհանուր համակրութիւն և սէր, որ անջինջ կմնայ նորա պաշտօնակիցների, ընկերների և սաների սրտի խորքի մէջ։ Հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսը վայելուչ շքեղութեամբ կատարուեցաւ և նորա մարմինը ամփոփուեցաւ Ս. Գայիանէի վանքի գաւթում։

Միւս ուսուցիչներից և վերակացուներից թողին Ճեմարանը՝ պ. պ. Յովհաննէս Սաղաթելեան, Մինաս Աղնաւուրեան և Աբէդնագով Ալէքսանեան։

Նոր հրաւիրուեցան՝ Արժ. Ղևոնդ վարդապետ և պ. պ. Յովհաննէս Յովհաննիսեան, Բարսեղ Գասպարեան, Եղիշէ Մաղաթեան, Կարապետ Տ. Մկրտչեան և Սէթ Յարութիւնեան։

Լսարանական դասացուցակի մէջ հարկ եղաւ այս տարի եւս նշանաւոր փոփոխութիւններ մտցնել որ կազմուեցաւ այսպէս.

	դասերի թիւը		
	Ա. Լս	Բ. տար	Գ. աններ
1. Քննաբանութիւն Ս. Գրոց . . .	3	3	«
2. Եկեղեցական պատմութիւն . . .	2	2	2
3. Եկեղեց. մատենագրութիւն Հայոց . .	»	2	2
4. Արդի մատենագրութիւն Հայոց . .	2	»	»
5. Ռուսաց մատենագրութիւն . . .	2	2	2
6. Ընդհանուր մատենագրութիւն . .	2	2	2
7. Մանկավարժութիւն	4	«	»
8. Հոգեբանութիւն	»	4	2
9. Ուսումն դասաւանդութեան . . .	»	»	2
10. Ֆրանսերէն լեզու	2	2	2
11. Քննութիւն մատեն. Հայոց . (միացեալ)	2	2	2
Գումար	19	19	16

Ուսանողների մանկավարժական տեսական պարապմանց աւելացաւ այս տարի և գործնական զբաղմունք վարժոցում, որ փոքր դիրքով դեկտեմբերին բացինք՝ միայն 16 երթևեկների համար։

Դպրոցական բաժնի դասերի մատակարարութեան մէջ եւս մի քանի բարեփոխութիւններ եղան, որ պարզ կերևի ուսուցչաց դասերի ցուցակից, որ է.

1. Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ	2. Տ. ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ
Քրիստոնէական Վարդապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ	Զայնագրութիւն
Ե. դասարան . 3 դաս	Գ. դասարան . 3 դաս

Դ. դասարան . 3 դաս
6 »

3. Պ. ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ

ա. Տրամաբանութիւն

Զ. դասարան . 4 դաս

բ. Մանկավարժութիւն

Ա. Լսարան . 4 դաս

գ. Հոգեբանութիւն

Բ. Լսարան . 4 դաս
Գ. » . 2 »

դ. Ռուսաց քաղաքացիութեան

Գ. Լսարան . 2 դաս
16 »

և շեկավարութիւն վարժոցի

4. Պ. ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ
(մինչև Նոյեմբերի 29ը)

ա. Հայոց պատմութիւն

Գ. դասարան . . 2 դաս
Դ. » . . 2 »
Ե. » . . 2 »
Զ. » . . 1 »

բ. Ֆրանսերէն լեզու

Դ. դասարան . . 3 դաս
Ե. » . . 3 »
Զ. » . . 3 »

Ա. Լսարան . . 2 դաս
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »
22

5. Պ. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

ա. Եկեղեց. Մատենագր. Հայոց

Բ. Լսարան . . 2 դաս
Գ. » . . 2 »

բ. Եկեղ. Պատմ. Հայոց

Զ. դասարան . . 2 դաս

գ. Պատմ. Մատենագր. Հայոց

Ե. դասարան . 3 դաս
Զ. » . . 3 »
Ա. Լսարան . . 2 »
Միացեալ լսարանք . 2 »
16

6. Պ. ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

Հայոց լեզու

Գ. դասարան . . 5 դաս
Դ. » . . 5 »
Ե. » . . 2 »
Զ. » . . 2 »
14

Պ. ՍԱՐԳԻՍ Տ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ա. Ռուսաց Ս. Գիրք

Գ. դասարան . 3 դաս
Դ. » . 3 »

Ե. դասարան . 2 դաս
Զ. » . 2 »

բ. Քննաբանութիւն Ս. Գրոց

Ա. լսարան . 3 դաս
Բ. » . 3 »

գ. Եկեղեց. Պատմութիւն

Ա. լսարան . 2 դաս
Բ. » . 2 »
Գ. » . 2 »
22 »

8. Պ. ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ա. Ռուսաց լեզու

Գ. դասարան . 4 դաս
Դ. » . 4 »
Ե. » . 4 »
Զ. » . 4 »

բ. Պատմ. Ընդհ. Մատենագր.

Ա. լսարան . 2 դաս
Բ. » . 2 »
Գ. » . 2 »
22 »

9 Պ. ԲԱՐՍԵՂ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ա. Մաթեմատիքա

Գ. դասարան . 4 դաս
Դ. » . 4 »
Ե. » . 3 »
Զ. » . 3 »

բ. Բնագիտութիւն

Ե. դասարան . 2 դաս
Զ. » . 3 »
19 »

10. Պ. ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆ

ա. Ընդհ. Պատմութիւն

Գ. դասարան . 2 դաս
Դ. » . 2 »
Ե. » . 2 »
Զ. » . 2 »

բ. Ռուսաց Պատմութիւն

Ե. դասարան . 2 դաս
Զ. » . 2 »

գ. Ռուսաստ. Աշխարհագրութիւն

Դ. դասարան . 2 դաս

դ. Պատմ Մատենագր. Ռուսաց

Ա. լսարան . 2 դաս
Բ. » . 2 »
Գ. » . 2 »
20 »

11. Պ. ՌՈՒԲԷՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ

Տաճկերէն լեզու

Տաճկահպատակաց 6 դաս
համար

12. Գ. ԳԷՈՐԳ Տ. ԲԱՐԴՈՒ-ՂԻՄԷՈՍԵԱՆ

Ընդհանուր Աշխարհագրություն

Գ. դասարան . 4 դաս

13. Գ. ԿԱՐԱՊԵՏ Տ. ՄԿՐՏՉԵԱՆ

Հայոց Աշխարհագրություն

Գ. դասարան . 3 դաս

14. ԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ս. Բնախօսություն

Դ. դասարան . 2 դաս

Բ. Տիեզերագրություն

Ե. դասարան . 1 դաս

3 »

Ընդամենը 176 դաս

Սոցանից 50 դասը լսարաններում և 126 դասը դասարաններում։

Մինչև յունվարի 19ը Ստեփանոս Գալաստանեանի դասերը պարապ մնացին, քանի որ մենք դեռ մեծայոյս էինք նորա առողջանալու մասին. բայց տեսնելով որ նորա հիւանդութիւնը երկարում է, այդ օրուանից նորա 22 դասից 16ը ընկերակիցները յօժարակամ բաժանեցին իւրեանց մէջ. մնացին միայն լսարանների ֆրանսերէնի դասերը պարապ։

16 դասից յանձն առան՝

3ը—Պ. Կ. Կոստանեանը,
4ը— » Ե. Մաղաքիանը,
1ը— » Ս. Տ. Գաբրիէլեանը,
2ը— » Ց. Ցոլհաննիսեանը,
2ը— » Բ. Գասպարեանը,
2ը— » Կ. Տ. Մկրտչեանը,
2ը— » Ս. Ցարութիւնեանը։
16 դաս

Տարուայ ընթացքում բոլոր ուսուցիչները կանոնաւոր յաճախել են դասերի և բացակայութիւնները միշտ յարգելի պատճառներով են եղել։ Ահա և ցուցակը.

	Ունեցել է	պակասել է	աւելի է պարտել	ընդ ամենը պարապել է
Տ. Սահակ վարդապետ . .	81	40	»	41
» Ղեւոնդ վարդապետ . .	157	»	3	160
Պ. Ս. Մանդինեան . . .	430	4	»	426
» Ս. Պալասանեան . . .	230	20	»	210
» Կ. Կոստանեան . . .	470	28	»	442
» Մ. Պալեան . . .	378	»	»	378
» Ս. Տ. Գաբրիէլեան . .	582	7	»	575
» Ց. Յովհաննիսեան . .	603	»	»	603
» Բ. Գասպարեան . . .	532	17	»	515
» Ե. Մաղաթեան . . .	556	2	»	554
» Ռ. Ռուբինեան . . .	161	5	»	156
» Գ. Տ. Բարդուղիմէոսեան .	106	2	»	104
» Կ. Տ. Մկրտչեան . .	102	»	21	123
» Ս. Յարութիւնեան . .	25	»	»	25
» Ա. Նահապետեան . .	74	»	8	82
Գումար	4487	125	32	4394

Ուրեմն ընդ ամենը պարապ են մնացել 93 դաս, որ 100ին մօտ 2 տոկոս է կազմում։

Մայիսին եղան ըստ սովորականին հրապարակական քննութիւններ։

Բ լսարանի Հոգեբանութեան և Ե. դասարանի Ս. Գրոց ուսման քննութիւնները բարեհաճեցաւ պատուել իւր բարձր ներկայութեամբ Նորին Վեհափառութիւնը։

Միաբանութեան անդամները ևս յաճախակի ներկայ էին լինում քննութեանց։

Ահա և փոխադրութեանց ցուցակը.

ՑՈՒՑԱԿ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

	Աւարտեցին	Փոխադրուեցին	Մնացին	Արձակուեցան ըստ կամաց	Վտարաքսեցան	Գումար
Գ. լսարան—	7	»	»	»	»	7
Բ, »	»	8	»	»	2	10
Ա. »	»	13	»	»	»	13
Զ. դասարան—	4	12	1	»	»	17
Ե. »	»	17	2	»	»	19
Դ. »	»	21	»	6	»	27
Գ. »	»	15	1	1	»	17
Գումար	11	86	4	7	2	110

Նորին Ս. Օծութեան Հայրապետական օրհնութեամբ այս տարի աւարտեցին իւրեանց ուսման ընթացքը Գ. լսարանից եօթը հոգի.

1. Աշարոնեան Գէորգ Թիֆլիզեցի
2. Զոհրաբեան Եղիա Վարդաբլուրցի
3. Խաչումեան Յովհաննէս Գանձակեցի
4. Հովուեան Պետրոս (Պօղոս) Դուռնակեցի
5. Ղազարեան Մկրտիչ Կարսեցի
6. Չէօրէքչեան Գէորգ Ն. Նախիջևանցի
7. Տ. Գրիգորեան Անտոն Ագխամանցի։

Սոցանից, ինչպէս վերը յայտնելու առիթ ունեցանք, Գէորգ Չէօրէքչեանը սարկաւագ ձեռնադրուեցաւ։

Անցեալ ուս. տարուայ ընթացքում ըստ սովորականին հանդիսաւոր կերպով տօնեցինք՝ Ս. Թարգմանչաց, Առաջին լուսաւորչաց մերոց Ս. Առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, Ս. Վարդանանց զօրավարաց և Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի եկեղեցական տօները։ Նոյնպէս հանդիսով տօնուեցաւ ձեմարանիս տարեդարձը։

Նաև ունեցանք 13 գրականական երեկոյթներ և 3 ճառախօսութիւններ Վեհարանում՝ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետին ուղղած։

Իսկ փետրվարի 4-ին խորին ակնածութեամբ յոտնկայս ունկընդիր եղանք Նորին Ս. Օծութեան Տ. Տ. Մակարայ Ա. ընդհանրական թղթի հանդիսաւոր ընթերցմանը՝ ի ներկայութեան միաբանութեան անդամոց։

Այս բոլոր հանգէսներին մասնակից են եղել ձեմարանիս աշակերտեալները՝ ոմանք բերանացի ատենաբանութեամբ, ոմանք ճառերով, ոտանաւորներով և արձակ գրուածքներով, թէ գրաբառ և թէ աշխարհաբառ. ոմանք ընթերցանութեամբ ընտիր ոտանաւորների և հատուածների՝ թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ ֆրանսերէն լեզուներով և ոմանք էլ մեներգներով։ Մասնակցող աշակերտեալների թիւն է. 30 ուսանողներից 26ը և 80 աշակերտներից 68. ընդ ամենը 110 հոգուց 94ը։

Ձեմարանիս ուսումնական կրկնակի խորհուրդները ունեցել են 18 նիստ աշակերտելոց յառաջադիմութեան և զարգացման վերաբերեալ խնդիրների համար։ Աշակերտելոց վարուց և բարուց մասին բարեբաղդաբար հարկը չէ ստիպել մեզ ժողովներին դիմելու։

Կարգապահութեան համար նշանակուած էին պ. պ. Գրիգոր Տ. Ցարութիւնեան և երեք հոգի ձեմարանի ընթացաւարտ սաներից՝ Գէորգ Տ. Բարդուղիմէոսեան, Կարապետ Տ. Մկրտ-

չեան և Սէթ Ցարութիւնեան, որոնք երկու երկու հերթ են պահել օր մէջ։

Ճեմարանիս տնտեսի պաշտօնը ըստ առաջնոյն վարել է շնորհունակ Կիւրեղ սարկաւագը, իսկ քարտուղարութիւնը Պ. Ռուբէն Ռուբինեանը։

Ճեմարանիս առողջապահական վիճակը շնորհիւ պ. բժիշկ Միքայէլ Զարգարեանի հոգացողութեան գոհացուցիչ դրութեան մէջ էր։ Զնայելով սորան անցեալ տարի մինը միւսի յետևից ընդ ամենը 15 օրուայ մէջ դժբաղդութիւն ունեցանք զրկուելու Բ. լսարանի երկու ուսանողներից։ Հոկտեմբերի 26ին վախճանեցաւ Ճեմարանիս հիւանդանոցում Քիշնևցի Տեօլվեթեան Լուսեղէնը և Նոյեմբերի 10ին իւր հայրական տանը՝ Վաղարշապատցի Թառումեան Տիգրանը։

Երկուսն էլ վայելուչ շքեղութեամբ ամփոփուեցան միաբանից գերեզմանատանը։

Միւս ծանր դէպքերը բարեբաղդաբար կարողացանք խնամքով բժշկել. իսկ թեթև հիւանդութիւնները, որոնք սովորական են մանաւանդ տեղոյս կլիմային անսովոր տղայոց համար, կարճատև լինելով շատ չէին յետ ձգում աշակերտեալներին իւրեանց պարապմունքներից։

Մայր եկեղեցւոյս դպրութիւնը ըստ սովորականին կատարեցին անցեալ տարի էլ մեր աշակերտեալները, որոնք հերթով վարում էին այդ պաշտօնը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ յայտնել թէ երգչաց և թէ առհասարակ բոլոր աշակերտելոց՝ նոցա արիութեան համար դէպի եկեղեցական պաշտօնավարութիւնը իւր բարձր գոհունակութիւնը՝ պարգևատրելով երկու դասապետներին՝ Գէորգ Զէօրեքչեանին և Գէորգ Ա.հարոնեանին և Դ. դասարանի աշակերտ Իգնատիոս Իլիէ քճեանին։

Հերթական դպիրների նախապատրաստութեան համար Արժ. Ղևոնդ Վարդապետը ամենայն օր աւուր պատշաճի ժամակարգութիւնը դասերից յետոյ կրկնել էր տալիս իւր առաջնորդութեամբ, որով և Եկեղեցւոյ սպասաւորութիւնը աւելի պատշաճաւոր կերպով էր առաջ գնում:

Վերջացնելով մեր խօսքը մեզ կմնայ սպասել, որ Աստուծոյ Ամենակարող օգնութեամբ Ճեմարանս քանի գնայ, այնքան աւելի և աւելի կառաջադիմէ: Հեռու լինի մեզանից այն փոքրոգի յուսահատութիւնը, որ շտապելով վաղահաս պտուղներ քաղելու և մեր ամենից ցանկացածը և սպասածը այսօր չտեսնելով, վաղուայ յոյսն էլ կորցնում է: Չմոռանանք, որ դպրոցական գործի յաջողութիւնը նորա յարատև խաղաղ ընթացքի մէջ պէտք է որոնել:

Ի բոլոր սրտէ ցանկանանք, որ մեր ընթացաւարտները խրախուսուած բարի օրինակով ամենայն սիրով և յօժարութեամբ ստանձնեն այն լուծը, որ մեր Եկեղեցւոյ պահանջները դնում են նոցա վերայ:

Մենք լիայոյս ենք, որ մեր այս բարեմաղթութիւնները և ակնկալութիւնները կիրագործուին, աչքի առաջ ունենալով Նորին Վեհափառութեան հայրախնամ բարձր ուշադրութիւնը Ճեմարանիս վերայ: Մաղթենք, որ Ամենազօր Աստուած երկար կեանք և կարողութիւն պարգևէ Նորին Ս. Օծութեան իւր Հայրապետական բազմազբաղ հոգսերի հետ ի միասին հետևելու իւր սրտագին բաղձանքին համեմատ պայծառացնել Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ լուսաւորութեան այս սրբավայրը:

Տեսուչ Ճեմարանի ՆԱՀԱՊԵՏ աբեղայ:

Ի 1889 ամի
30 սեպտեմբերի
Ի Ս. Էջմիածին: